ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նախաբան

Վերջին տասնամյակներում իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ կայացած ինստիտուտները տնտեսության զարգացման համար որոշիչ դեր ունեն[1]: Միևնույն ժամանակ, վերջին տարիների հետազոտությունները[2] փաստում են, որ տնտեսական զարգացումները ուսումնասիրելիս ինստիտուտների կայացածությանը զուգահեռ անհրաժեշտ է դիտարկել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են մարդկանց վարքագծային նախադրյալները և հասարակության կողմից ինստիտուտների ընկալումը: Ընդ որում, հասկանալի է, որ ինստիտուտների ընկալումը կախված է նաև դրանց որակից, իսկ մարդկանց վարքագծային նախադրյալները կարող են ազդել ինչպես ինստիտուտների որակի, այնպես էլ դրանց ընկալման վրա: Միաժամանակ առկա է նաև հակադարձ կապ, այն է՝ ինստիտուտների որակը կարող է ազդել մարդկանց վարքագծային նախադրյալների վրա:

Նախապայմաններ

Սոցիալ-տնտեսական բարեփոխումներ իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

1. 2018 թվականին տեղի ունեցած փոփոխությունները Հայաստանում ձևավորեցին նոր իրավիճակ, սակայն դա բնավ չի նշանակում, որ ինքնաբերաբար փոխվեցին նաև տնտեսական հարաբերությունները, ավանդույթները և արժեհամակարգը:

Հայտնի փաստ է, որ քաղաքական էլիտաների փոփոխման գործընթացը կարող է տեղի ունենալ շատ արագ, իսկ տնտեսական էլիտաները և համակարգերը դեռ երկար ժամանակ կարող են գոյատևել[3]՝ չենթարկվելով առանձնապես լուրջ փոփոխությունների, հարմարվելով քաղաքական նոր համակարգին՝ ժամանակի ընթացքում նույն այդ հա-

---

[1] Տե՛ս **North, D. C**. Institutions, Institutional Change, and Economic Performance. Cambridge University Press, New York. 1990:

[2] Տե՛ս **Саргсян Г. Л., Геворгян Р. А.** Конституционные традиции, институты, поведенческие предпосылки и благополучие стран // "Вестник Московского университета". Серия 6. Экономика, № 1, 2019:

[3] Տե՛ս **Daron Acemoglu, James A. Robinson**. 2008. Persistence of Power, Elites and Institutions. American Economic Review 98 (1):

մակարգը ծառայեցնելով իրենց նպատակներին: Այսպիսի իրավիճակը ցանկացած բարեփոխումների գլխավոր մարտահրավերն է, և պետք է փաստել, որ սույն խնդրի լուծումը միայն ուժային մեթոդներով հնարավոր չէ: Ավելին, լուծման ճիշտ տարբերակը համակարգային և ինստիտուցիոնալ մոտեցումն է:

2. Այն ինստիտուտները և արժեհամակարգը, որ այսօր մեր երկրում գոյություն ունեն, ձևավորվել են խորհրդային հզոր կայսրության փլուզման հետևանքով և փաստացի պատերազմական իրավիճակում, բնավ չեն նպաստում սոցիալ-տնտեսական զարգացման նոր ուղեծիր դուրս գալու նպատակին:

Հայտնի է, որ ֆորմալ և ոչ ֆորմալ «ոչ արդյունավետ» ինստիտուտները ունեն երկար գոյատևելու հատկություն: Ինստիտուցիոնալ հետազոտություններում դա հաճախ անվանում են «qwerty»-ի էֆեկտ կամ «ուղեծրի» էֆեկտ[4]: Նոր ուղեծիր դուրս գալու իրական հնարավորությունը ենթադրում է արդյունավետ ինստիտուտների ձևափոխում՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և գոյություն ունեցող արժեհամակարգը:

3. Քաղաքական էլիտան պետք է դրսևորի կամք այդպիսի ռեֆորմներ իրականացնելու համար և ունենա երկարաժամկետ պլանավորման հնարավորություն: Այս երկու պայմանները խիստ փոխկապակցված են, քանի որ ինստիտուցիոնալ ռեֆորմների արդյունքները կարող են տեսանելի լինել միայն երկարաժամկետ կտրվածքով: Հետևաբար քաղաքական էլիտան ոչ միայն կամք և պատրաստակամություն պետք է ունենա, այլև որոշակի վստահության քվե:

4. Հայաստանի հիմնական խնդիրները «բռնագրված պետություն» երևույթի հետևանք են, որը բավականին լավ նկարագրված է գիտական գրականությունում[5]: Այս հասկացությունը օգտագործում են այն դեպքերի համար, երբ պետության որոշ ինստիտուտների աշխատանքը ծառայում է որոշակի խմբերի՝ քաղաքական, տնտեսական կամ քրեական էլիտաների շահերը և պահանջմունքները բավարարելու համար, ավելին՝ դրանց կառուցվածքը և գործընթացները ի սկզբանե այնպես են ստեղծված, որ սպասարկեն նրանց շահերը: Կարևորագույն երկու հանգամանք, որ պետք է այստեղ հաշվի առնել, հետևյալն են՝

- պետության բռնագրավվածության բարձր մակարդակը և խորությունը, որն ընդգրկում է տարբեր ոլորտներ և պետական գրեթե բոլոր ինստիտուտները,
- «բռնագրավողների» գիտակրթական և արժեհամակարգային չափազանց ցածր մակարդակը, որը զգալիորեն զիջում է երկրի բնակչության միջին մակարդակին և հիմնված է «զոռբայության» սկզբունքի վրա:

---

[4] Տե՛ս **Аузан А. А**. Экономика всего. Как институты определяют нашу жизнь. М.: ООО Манн, Иванов и Фербер, 2014:

[5] Տե՛ս **Daron Acemoglu, James A. Robinson,** նշվ. աշխ.:

5. Այս բարեփոխումները կարող են հաջողություն արձանագրել միայն քաղաքական, տնտեսական և արժեհամակարգային փոփոխությունների միաժամանակյա իրականացման պայմաններում: Միաժամանակացման սկզբունքը հաջողության գլխավոր գրավականն է: Բացի այդ՝ գործողությունների կարևոր նախապայման է նաև ինստիտուցիոնալ սահմանափակումների և պարտադրանքի մեխանիզմների համադրության սկզբունքը:

Ինստիտուտները ձևափոխելու ուղիներ

Բացի ընդհանուր օրինաչափություններից, առանձին երկրներում գործող ինստիտուտների արդյունավետության և կայացածության մակարդակը որոշվում է այդ երկրների սոցիալ-տնտեսական զարգացածությամբ և արժեհամակարգերի բովանդակությամբ: «Ինստիտուցիոնալ ռեֆորմներ» ասելով հասկանում ենք յուրաքանչյուր ինստիտուտի վերափոխման առանձնահատկությունները հաշվի առնող գործառույթների համախումբ՝ միավորված ընդհանուր տրամաբանությամբ և միաժամանակացված միմյանց հետ:

Այս հոդվածի շրջանակներում նշենք մի շարք կարևոր ուղղություններ, որոնք պետք է մշակվեն ինստիտուցիոնալ և արժեհամակարգային ռեֆորմներ իրականացնելիս:

Պետության դերը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում

Պետություն-բիզնես-կառավարի՞չ, պետություն-ճգնաժամային կառավարի՞չ, թե՞ պետություն՝ խաղի կանոններ սահմանող: Այս հարցի պատասխանը կարևոր է ռեֆորմները կյանքի կոչելու համար, քանի որ պետության «բռնագրավվածության» մակարդակը որոշ չափով բացատրվում է բիզնես գործընթացներին պետության անմիջականորեն մասնակից լինելու հանգամանքով: Միևնույն ժամանակ հասկանալի է, որ այսօրվա իրավիճակում պետությունը ստիպված է միջամտել որոշ սոցիալ-տնտեսական նախագծերի: Այս առումով այսպես կոչված «միջանկյալ ինստիտուտների» գաղափարը կարող է կիրառվել որպես խնդրի լուծում[6]: «Միջանկյալ ինստիտուտներ» տերմինը օգտագործվում է այն դեպքերի համար, երբ բացակայում է ցանկալի ինստիտուտի ստեղծման անմիջական հնարավորությունը:

Պետական ինստիտուտների գլխավոր խնդիրն այն է, որ բռնագրավվածությունը ստացել է ինստիտուցիոնալ տեսք: Էլիտաներին, որոնց շահերի համար աշխատում են առանձին պետական կառույցներ, հաջողվել է ստեղծել «ոչ ֆորմալ օպորտունիստիկ ինստիտուտներ», որոնք հաջողությամբ գոյատևում են ֆորմալ ինստիտուտների ներսում՝

[6] Տե՛ս **Polterovich, Victor**, 2012. Проектирование реформ: как искать промежуточные институты (Proektirovanie reform: kak iskat' promezhutochnye instituty) [Reform Design: How to Search for Interim Institutions], MPRA Paper 41043, University Library of Munich, Germany:

հաճախ նույնիսկ փոխելով վերջիններիս նպատակադրումները: Այդ «ոչ ֆորմալ օպորտունիստիկ ինստիտուտները» ունեն որոշակի կառուցվածք, հիերարխիա և, ինչը ամենակարևորն է, բավականին կայուն և ճկուն են: Մասնավորապես, ինչ-որ մարդկանց պարզապես հեռացնելով այդ սխեմաներից, համակարգը չի քանդվում: Պետք է հստակ գիտակցել, որ համակարգային կոռուպցիայի հիմնական աղբյուրը և շարժիչ ուժը այս սխեմաներն են:

Դրանց գոյությունը թույլ չի տալիս պետությանը հանդես գալ որպես խաղի արդյունավետ կանոններ սահմանող և վերահսկող: Սա տնտեսական զարգացման գլխավոր խոչընդոտն է, քանի որ ոչ մի ներդրող չի կարող իրեն ապահով զգալ նման միջավայրում, փոխարենը փորձում է ապահովվածության երաշխիք ստանալ բարձրաստիճան պաշտոնյաների հետ շփումների արդյունքում: Գոյություն ունեն այսպիսի իրավիճակից դուրս գալու մի քանի հայտնի մոտեցումներ.

1. Հստակեցնել խաղի կանոնները, դարձնել դրանք իրականանալի՝ հաշվի առնելով տրանսակցիոն ծախսերը:

2. Մշակել իրատեսական վերահսկողական համակարգեր: Սա վերաբերում է ընդհանուր օրենսդրական կարգավորմանը, հատկապես պետական կառույցների ներքին ընթացակարգերին:

3. Մեծացնել քաղաքացիական հասարակության վերահսկողական հնարավորությունները և դրանք իրականացնելու մեխանիզմները:

4. Կիրառել պարտադրանքի տարբեր մեթոդներ օրենքի խախտումների դեպքում: Ամենավտանգավորն այն է, որ «ոչ ֆորմալ օպորտունիստիկ ինստիտուտները» կարող են երկար ժամանակ գոյատևել և գործունեություն ծավալել առանց օրենքների ֆորմալ խախտման:

Այնուհանդերձ, Հայաստանում այսօր ստեղծված իրավիճակը թույլ է տալիս ենթադրել, որ այս հայտնի մեթոդների կիրառությունը բավարար չի լինի դրական արդյունք ակնկալելու համար, այլ անհրաժեշտ է նաև՝

1. մշակել «ոչ ֆորմալ օպորտունիստիկ ինստիտուտների» ապամոնտաժի քաղաքականություն, որը կներառի՝

- ամեն առանձին դեպքում դրանց կառուցվածքի, ինֆորմացիոն և նյութական հոսքերի վերլուծությունը,
- վերլուծության հիման վրա որոշել բացահայտված սխեմաների այն թույլ տեղերը, որտեղից պետք է սկսվի «ոչ ֆորմալ օպորտունիստիկ ինստիտուտների» ապամոնտաժի գործընթացը,
- վեր հանել առաջնային գործողությունների բովանդակությունը և կիրառել տարբեր մեթոդների՝ կանոնակարգերի փոփոխությունների, պարտադրանքի և կադրային փոփոխությունների ճիշտ համադրում,

2. պետության և ամեն առանձին ինստիտուտի մակարդակով հստակ հայտարարել (առանց «աչքով անելու»), որ այս վարքագիծը անընդունելի է և խստորեն պատժելի:

Բիզնես ինստիտուտների վերափոխումը

Հայաստանում բիզնես ինստիտուտների ձևավորումը չունի լայն տարածում: Բացառությամբ մի շարք դեպքերի (օրինակ՝ բանկային ոլորտի մի շարք կազմակերպություններ)՝ բիզնես հարաբերությունները հիմնականում անձնավորված են, իսկ արտադրական լուրջ հնարավորություններ ունեցող ձեռնարկությունները վերածվում են տնայնագործական արտելների: Այսպիսի իրավիճակը ունի օբյեկտիվ պատճառներ: Դրանցից ամենակարևորը փոքր տնտեսությունն է: Բիզնես ինստիտուտների ձևավորմանը մեծապես նպաստում է մասշտաբի էֆեկտը:

Իրական ներդրումներ ակնկալելու համար անհրաժեշտ են որպես ինստիտուտ կազմակերպված բիզնես միավորներ, որոնք ունեն թափանցիկ և վերահսկելի ներքին ընթացակարգեր: Ընդ որում՝ այս մոտեցումը կիրառելի է ոչ միայն խոշոր, այլ նաև փոքր և միջին բիզնեսի համար: Պարզապես ներքին կարգավորման և վերահսկման համակարգերի ծավալը կարող է լինել ավելի փոքր:

Բիզնես ինստիտուտների բացակայությունը հանգեցնում է երեք կարևոր հետևանքների, որոնք ունեն անմիջական ազդեցություն երկրի քաղաքական իրավիճակի վրա:

1. Օլիգարխիկ համակարգերը փորձում են չմիջնորդավորված մասնակցել երկրի քաղաքական կյանքին, ինչը և պատճառ է դառնում վերևում քննարկված «բռնագրավված պետության» իրավիճակի ի հայտ գալուն: Այստեղ, իհարկե, կարևոր է նշել, որ գոյություն ունի նաև հակադարձ կապ. օլիգարխիկ համակարգերի գոյությունը խոչընդոտում է բիզնես ինստիտուտների կայացումը: Վերը նշված «չմիջնորդավորված» բառը կարևոր է, քանի որ հատկապես խոշոր բիզնեսը մասնակցում է ցանկացած երկրի քաղաքական կյանքին, սակայն դա պետք է լինի չմիջնորդված, օրինակ՝ որպես բիզնես ինստիտուտ, որը ունի վերահսկելի ներքին ընթացակարգեր:

2. Բիզնես ինստիտուտների բացակայությունը հանգեցնում է մի իրավիճակի, երբ չի ձևավորվում իրական արդարադատության պահանջարկ: Տնտեսական վեճերի մեծ մասը շատ հաճախ լուծվում է կրիմինալ բնույթի անձնական հարաբերությունների հիման վրա:

Այս խնդրի լուծումը կարող է լինել կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրումը: Այստեղ նույնպես կարող են կիրառվել երեք հիմնարար սկզբունք.

1. Պարտադրանքի սկզբունքը: Որոշակի պայմանների բավարարող ձեռնարկությունները պարտավոր են ներդնել կորպորատիվ կառավարման սկզբունքներ: Օրինակ՝ շուկայի որոշակի մասից կամ սեփական կապիտալի նախապես որոշված մակարդակից բարձր ցուցանիշ ունենալու դեպքում ձեռնարկությունը պարտավոր է լինում ներդնել կորպորատիվ կառավարման որոշակի սկզբունքներ: Այսպիսի մոտեցումը թույլ կտա միանգամից մի քանի խնդիր լուծել, այդ թվում

նաև նպաստել մենաշնորհների խնդրի լուծմանը:

2. Միջանկյալ ինստիտուտների սկզբունքը: Կորպորատիվ կառավարման սկզբունքները պետք է ներդրվեն աստիճանաբար, որպեսզի ընկերությունների վրա ֆինանսական նոր ծանրաբեռնվածություններ չառաջանան:

3. Անհրաժեշտ է իրական օրինակների վրա ցույց տալ, որ կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրումը թույլ է տալիս օգտվել ֆինանսավորման ավելի էժան և դիվերսիֆիկացված աղբյուրներից: Իրականում հաճախ ներդրումների ներգրավման խոչընդոտը կորպորատիվ հստակ և թափանցիկ գործընթացների բացակայությունն է:

Արժեհամակարգերի ձևավորում, վարքագիծ, ոչ ֆորմալ ինստիտուտներ և տնտեսական զարգացում

Ցանկացած ինստիտուտ կանոնների համախումբ է՝ դրանց կատարման մեխանիզմների ամբողջությամբ: Ե՛վ կանոնների համախումբը, և՛ դրանց կատարման մեխանիզմներն ըստ էության վերաբերում են մարդկանց վարքագծին: Այսպիսով, եթե ինստիտուտներն իրականում կարևոր են տնտեսական վերելքի համար, ապա պակաս կարևոր չէ մարդու վարքագծի հայեցակարգն այդ ինստիտուտների ձևավորման գործում: Այդ պատճառով տնտեսական զարգացման ինստիտուցիոնալ ասպեկտների ուսումնասիրման ժամանակ միայն «ռացիոնալ մարդու» հայեցակարգը կարող է բավարար չլինել: Դա է պատճառը, որ նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության մեջ ներդրվում են սահմանափակ ռացիոնալության[7] և օպորտունիստական վարքագծի[8] հասկացությունները: Գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ երկրների տնտեսական զարգացումը պայմանավորված է ոչ միայն ինստիտուտների որակով, այլ նաև մարդկանց վարքագծային նախադրյալներով, ինչպես նաև քաղաքացիների մեծամասնության կողմից ինստիտուտների ընկալման մակարդակով:

Կանոնների այս կամ այն համախմբի կատարումն ապահովող մեխանիզմները ինստիտուտների գործելու հիմնարար սկզբունքն են: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ այդ մեխանիզմների կիրառման արդյունավետությունը կախված է առանձին անհատների կողմից դրանց ընկալումից և վարքագծային նախասահմանումներից: Այդ տեսանկյունից այն ինստիտուտները, որոնք մարդկանց մեծամասնության կողմից ընկալվում են ենթագիտակցական մակարդակում, գոյատևելու ավելի մեծ հնարավորություն ունեն, քան նրանք, որոնք բացառապես հիմնված են հարկադրանքի գաղափարի վրա: Դա վերաբերում է բոլոր ինստիտուտներին և դրանց հետ կապված կանոնների համախմբին,

---

[7] Տե՛ս **Gigerenzer G., Selten R.**, Bounded Rationality: The Adaptive Toolbox, MIT Press, 2002:

[8] Տե՛ս **Williamson O. E.**, Opportunism and its critics // *Managerial and decision economics*, Vol. 14, 1993, էջ 97:

բայց հատկապես այն կանոններին, որոնք կոչված են ամենօրյա փոխհարաբերությունների հիման վրա ապահովելու հասարակական հարաբերությունների հիմքերը, և դրանց խախտումը չի կարող ենթադրել խիստ պատիժներ:

Այլ կերպ ասած՝ դրանք այնպիսի խախտումներ են, որոնք, ինչպես սպորտում, երբեմն անվանում են «փոքր խախտումների մարտավարություն»: Տրանսակցիոն ծախսերի տեսանկյունից դրանք կանոններ են, որոնց կատարման ապահովումը կարող է ամենաանարդյունավետը լինել հասարակության համար: Այնուամենայնիվ, այդպիսի իրավիճակի բացասական ազդեցությունը կարող է շատ նշանակալի լինել: Օրինակ՝ հայտնի է, որ անցումային և զարգացող երկրներում սոցիալ–տնտեսական շատ խնդիրներ ունեն ինստիտուցիոնալ արմատներ:

Մեր կարծիքով՝ անցումային և զարգացող երկրներում ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումները կյանքի կոչելու դժվարությունների հիմնական պատճառներից են մարդկանց ընկալումները, վարքագծային նախադրյալները և արժեհամակարգը կամ այլ կերպ ասած՝ ոչ ֆորմալ ինստիտուտների համակարգը:

Նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության մեջ օպորտունիստական վարքագծի հասկացությունը կապում են այնպիսի իրավիճակների հետ, երբ գործակալները՝ անձնական շահ հետապնդելով, հասնում են ուխտադրժության (self interest seeking with guile): «Փոքր խախտումների մարտավարությունը» մենք դիտարկում ենք որպես օպորտունիստական վարքագծի դրսևորումներից մեկը: Հասարակական կյանքում «փոքր խախտումների մարտավարության» պատճառները կարող են շատ տարբեր լինել, բայց ամենակարևորը էլիտաների վարքագիծն է, որը անպատիժ կիրառում է «մեծ խախտումների մարտավարությունը»: Հաճախ դրա պատճառ կարող է լինել արտաքին շոկը՝ պատերազմների, հեղափոխությունների, երկրների փլուզման և այլնի տեսքով:

Փոքր խախտումների օպորտունիստական վարքագիծը հաղթահարելու համար անհրաժեշտ է.

1. Ձևավորել քաղաքական էլիտայի վարքագծի նոր համակարգ:
2. Իրականացնել ինստիտուցիոնալ և արժեհամակարգային խորը բարեփոխումներ դպրոցում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, բանակում և ազատազրկման վայրերում: Ինստիտուցիոնալ տնտեսագիտության հետազոտությունները ցույց են տալիս, որ հենց այս ոլորտներն են աշխարհայացք և աշխարհընկալում ձևավորող հիմնական օղակները: Այս ինստիտուտների գլխավոր խնդիրը նույնպես «ոչ ֆորմալ օպորտունիստիկ ինստիտուտների» գոյության հանգամանքն է: Հետևաբար խնդիրների լուծման մեխանիզմները մոտավորապես համընկնում են պետական կառույցների համար սահմանված մեթոդներին:

Պետք է նշել նաև, որ այս ռեֆորմները անմիջականորեն կապված են լինելու մարդկային կապիտալի որակը բարձրացնելու խնդրի հետ:

Բանալի բառեր – *ինստիտուտներ, արժեհամակարգ, քաղաքական էլիտաներ, օ-պորտունիստական վարքագիծ, բռնագրավված պետություն, միջանկյալ ինստիտուտ-ներ, օլիգարխիկ համակարգեր, ինստիտուցիոնալ ռեֆորմներ*

РУБЕН ГЕВОРГЯН, ГАЯНЕ ГЕВОРГЯН – ***Институтоциональные и ценностно-системные реформы в РА***. – В статье обсуждается, необходимы ли институциональные реформы наряду с изменениями в системе ценностей, чтобы достичь успехов в социально-экономическом развитии страны. Такие реформы возможны, только если принять во внимание долгое засилье неэффективных институтов и определить способы их реформирования. Показано, что реформы являются необходимым предусловием для всех сценариев социально-экономических преобразований в Армении. Рассматриваются также особенности институциональных реформ и новая система ценностей в отдельных сферах экономики.

Ключевые слова: *институты, система ценностей, политическая элита, оппортунистическое поведение, «захваченное» государство, промежуточные институты, олигархическая система, институциональные реформы*

RUBEN GEVORGYAN, GAYANE GEVORGYAN – ***Institutional and Value System Reforms in RA***. – The article discusses the need for institutional reforms and changes in the value system to achieve new successes in the socio-economic development of the country. Such reforms are possible only if the possibility of the long existence of inefficient institutions and the ways of their reform are taken into account. It is shown that these reforms are a necessary precondition for all scenarios of socio-economic transformations in the Republic of Armenia. The article also discusses the features of institutional reforms and changes in the system of values in different sectors of the economy.

Key words: *institutions, value system, political elite, opportunistic behavior, "captured" state, intermediate institutions, oligarchic system, institutional reforms*

Ներկայացվել է՝ 31.05.2019
Գրախոսվել է՝ 10.06.2019
Ընդունվել է տպագրության՝ 22.07.2019